

**ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1990-2000 ԹԹ.  
(պատմաքաղաքագիտական ակնարկ)**

**Գ. Մ. ԶԵՆՑԱՆ**

Քաղաքական կուսակցությունները հասարակության քաղաքական համակարգի ամենակարևոր հաստատություններից են: Առանց կուսակցությունների այսօր դժվար է պատկերացնել ընտրությունների իրականացումը, պետական իշխանության մարմինների կազմավորումը, քաղաքական ազատությունները: Առանց կուսակցությունների քաղաքակիրթ պայքարի ու փոխգործունեության անհնարին է հասարակության քաղաքական համակարգի դեմոկրատացումը, անհատի ազատությունը: Որպես պետական իշխանության տիրող կազմակերպություններ, նրանք մեծ դեր ունեն պետության կայացման ու զարգացման գործում: Այս առումով ցանկանում ենք ընդգծել, որ կուսակցությունների կառուցողական դիրքորոշումից է կախված պետականության ապագան:

Հասարակության քաղաքական կազմակերպման կարևորագույն բնութագրիչը կուսակցական համակարգն է, որը իբրև քաղաքական ինստիտուտ ցույց է տալիս հասարակության մեջ դեմոկրատիայի առկայությունը, ինչպես նաև բնութագրում է քաղաքական ընդհանուր համակարգի մյուս հաստատությունների հետ կուսակցությունների փոխհարաբերությունները:

Հայաստանի Հանրապետությունն ունի բազմակուսակցական համակարգ, ուստի մենք ավելի մանրամասն կներկայացնենք հենց այս համակարգը: Բազմակուսակցությունը հաստատված է այն երկրներում, որտեղ կան քաղաքական ազատություններ և դեմոկրատական իրավունքներ, որոնք հնարավորություն են ստեղծում ազատ քաղաքական գործունեության համար: Այսպիսի երկրներում կազմավորվում և ազատորեն գոծում են բազմաթիվ կուսակցություններ: Բազմակուսակցական համարվում է այն համակարգը, որտեղ գործում են պետական իշխանությունը վերցնելու հնարավորություն ունեցող երկուսից ավելի կուսակցություններ: Սակայն բազմակուսակցական համակարգը չի իմաստավորվում միայն որոշակի թվով կուսակցությունների առկայությամբ: Որքան էլ շատ լինի կուսակցությունների թիվը, տվյալ համակարգը չի կարելի համարել բազմակուսակցական, եթե չկան պայմաններ պետական իշխանության մարմինների կազմավորման գործում կուսակցությունների մասնակցության ապահովման համար: Այսինքն, բազմակուսակցությունն անմիջականորեն կապված է պատվամեծտական կարգի, դեմոկրատիայի և քաղաքական ազատությունների հետ:

Բազմակուսակցական համակարգն ամենաժողովրդավարականն է իր բնույթով: Այն ապահովում է հասարակության մեջ քաղաքական հայացքների արտահայտման ու քարոզչության ազատությունը, հնարավորություն է ստեղծում հասարակության խաղաղ, աստիճանական զարգացման ու քաղաքական տարբեր ուժերի անարյուն պայքարի ու համագործակցության համար: Բազմակուսակցական համակարգը հնարավորություն է տալիս քաղաքական ուժերի խաղաղ մրցակցության պայմաններում գտնել ու կենսագործել ճկուն որոշումներ, որոնք համապատասխանում են ազգի մեծամասնության շահերին:

Իրավական պետության մեջ բազմակուսակցական համակարգը հաստատվում է քաղաքական կուսակցություններին վերաբերվող իրավական-օրենսդրական ակտերի միջոցով: Դրանք սահմանադրությունների համապատասխան հոդվածներն են, նահանգային կամ համապետական օրենսդրությունները, ընտրական օրենքները կամ էլ հատկապես քաղաքական կուսակցությունների մասին օրենքները:

Բազմակուսակցությունը Հայաստանում փաստացիորեն հաստատվեց 1988-89 թթ., սակայն իրավականորեն բազմակուսակցական համակարգի հիմքը դրվեց միայն 1991 թ.-ին, երբ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը փետրվարի 26-ին ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքը»: Օրենքի հենց առաջին հոդվածը նվիրված է այս հասկացության սահմանմանը, որտեղ ասված է՝ «Հասարակական քաղաքական կազմակերպությունը կամավոր հիմունքներով միավորված Հայաստանի Հանրապետության ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորում է, ունի ծրագիր ու կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական մշակութային կյանքին»: Այս վկայում է, որ Հայաստանում պետական մոտեցումը քաղաքական կուսակցություն հասկացության սահմանմանը նույնն է, ինչ որ արևմտաեվրոպական զարգացած երկրներում, որոնց օրենսդրական ակտերում նույնպես կուսակցությունը դիտվում է որպես ընտրությունների միջոցով պետության կառավարմանը մասնակցող քաղաքացիների քաղաքական կազմակերպություն:

Օրենքի մյուս յոթ հոդվածները վերաբերում են հանրապետության տարածքում գործող քաղաքական կուսակցությունների գործունեության կանոնակարգմանը: Դրանց համաձայն՝ ուժային նախարարությունների և դատական մարմինների աշխատակիցները չեն կարող լինել կուսակցությունների անդամ: Կուսակցություններին արգելվում է ղեկավարվել Հայաստանի տարածքից դուրս գործող կազմակերպությունների և պետական մարմինների կողմից և նրանցից նյութական օգնություն ստանալ: Արգելվում է նաև կազմակերպություններ հիմնել պետական մարմիններում և ձեռնարկություններում, ունենալ ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնող օբյեկտներ: Առանձին հոդվածով կանոնակարգվում է հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեության կասեցումը և արգելումը, որի մասին որոշումն իրավասու է կայացնել Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանը՝ գլխավոր դատախազի կամ արդարադատության նախարարության ներկայացմամբ:

Եթե Հայաստանի Հանրապետության բազմակուսակցական համակարգի հիմքը դրվեց 1991 թ. վերոհիշյալ օրենքով, ապա այն վերջնականորեն ձևավորվեց 1995 թ. ընդունված սահմանադրությամբ և նոր ընտրական օրենքով իրականացված խորհրդարանական-բազմակուսակցական ընտրություններով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրության մի շարք հոդվածներ տալիս են բազմակուսակցական համակարգի իրական և կայուն երաշխիքներ: 24-րդ հոդվածի համաձայն, «...Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Ինչպես արդեն նշեցինք սկզբում, առանց խոսքի ազատության, բազմակուսակցությունը դառնում է սոսկ պատրանք: 25-րդ հոդվածով սահմանադրորեն ամրակալվում է քաղաքական կուսակցությունների կարգավիճակը, համաձայն որի «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու

լու իրավունք: Այս իրավունքները կարող են սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ: Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման»:

Հայաստանի Հանրապետության բազմակուսակցական համակարգի կայացման գործում էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ համաձայն նոր ընտրական օրենքի և սահմանադրության մի քանի այլ հոդվածների, կուսակցությունները հնարավորություն են ստանում մասնակցություն ունենալ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների կազմմանը: ՀՀ խորհրդարանի՝ Ազգային ժողովի, ընտրությունների անցկացումը ոչ միայն մեծամասնական, այլ նաև համամասնական ընտրական համակարգով, հնարավորություն տվեց քաղաքական կուսակցություններին հավաքած ձայների քանակին համապատասխան (եթե հաղթահարված էր հինգ տոկոսի բնագիծը) պատգամավորական տեղեր ձեռք բերել խորհրդարանում: Բացի այս, հանրապետության կառավարության ծրագիրը համաձայն սահմանադրության 74-րդ հոդվածի, պետք է քննարկվի և հավանության արժանանա Ազգային ժողովի կողմից, որի ժամանակ դրվում է նաև կառավարության վստահության հարցը: Անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունվելու դեպքում վարչապետը ՀՀ Նախագահին է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին դիմումը: Սահմանադրության 84-րդ հոդվածը ևս Ազգային ժողովին հնարավորություն է տալիս պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվստահություն հայտնել կառավարությանը: Սահմանադրության այս հոդվածներն ինքնըստիներան նշանակում են օրենսդիր իշխանության վստահության անհրաժեշտությունը գործադիր իշխանության կազմավորման գործում: Բնականաբար, ՀՀ Նախագահը, որը սահմանադրությամբ օժտված է լայն լիազորություններով, պետք է ձգտի կառավարությունը կազմել այն քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից, որոնք մեծամասնություն են կազմում խորհրդարանում: Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը և նշված օրենսդրական ակտերը քաղաքական կուսակցություններին տալիս են պետական իշխանության մարմինների կազմավորմանը մասնակցելու իրական հնարավորություններ և հանդիսանում են բազմակուսակցական համակարգի իրավական հիմքը:

Ներկայումս Հայաստանում գործող քաղաքական կուսակցությունների ճնշող մասը տակավին երիտասարդ է և քաղաքական ասպարեզ է իջել հիմնականում 80-ական թթ. վերջերին և 90-ական թթ. սկզբներին, երբ կոմունիստական վարչակարգի տապալումից և միակուսակցական համակարգի վերացումից հետո պայմաններ ստեղծվեցին կուսակցությունների կազմավորման և ազատ գործունեության համար: Կան նաև դեռևս անցյալ դարի 80-ական թթ. երկրորդ կեսին ձևավորված ազգային-ավանդական կուսակցություններ, որոնք գործում էին սփյուռքում և հայրենադարձվեցին պետական անկախության վերականգնումից հետո:

Ժամանակակից հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը կապված էր արցախյան շարժման նոր փուլի հետ, որը ազգային-ազատագրական շարժման ամենահզոր պոթենցիալներից մեկն էր: Միանգամից կազմավորվեցին և քաղաքական ասպարեզ իջան մի շարք նոր կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնց ծրագրային հիմնական պահանջները ձևավորման առաջին փուլում վերաբերում էին Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզը Հայաստանին վերամիավորվելուն և քաղաքական ազատությունների և բազմակուսակցության հաստատմանը: Այնուհետև առաջադրվեց նաև անկախ պետականության վերականգնման պահանջը:

Նորաստեղծ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների մեջ ամենախոշորը և ազդեցիկը արցախյան շարժումը կորդինացնելու նպատակով 1988 թ. մարտին ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեն էր, որի տեղա-

կան կազմակերպությունները կայծակնային արագությամբ հիմնվեցին հանրապետության բոլոր հիմնարկություններում և բնակավայրերում: Այսպես կազմավորվեց զանգվածային և առաջատար նոր քաղաքական ուժը իր կենտրոնական և տեղական կազմակերպություններով (հանրապետական «Ղարաբաղ» կոմիտեն կոչվեց «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»): Մյուս նորաստեղծ կուսակցություններից ակտիվ գործունեություն ծավալեցին Ազգային ինքնորոշում Միավորումը, Սահմանադրական Իրավունք Միությունը, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և այլն: 1988-89 թթ. ընթացքում Հայաստանի քաղաքական կյանքի բնորոշ գիծը երկբևեռայնությունն էր: Մի կողմում Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունն էր, որն իր ձեռքում էր պահում պետական իշխանության մարմինները և ստանում էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների աջակցությունը, մյուս կողմում՝ ազգային - ազատագրական՝ ղարաբաղյան և հակակոմունիստական շարժման հողի վրա ծրված նոր կուսակցություններն էին, որոնք արդեն վճռական քայլեր էին կատարում կոմունիստների մեծատիրությունը վերացնելու և իշխանության մարմիններ ներթափանցելու համար: Նման առաջին քայլերից էր Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի 1988 թ. հոկտեմբեր - նոյեմբեր և 1989 թ. օգոստոս ամիսներին տեղի ունեցած մասնակի ընտրություններում կոմունիստների կրած պարտությունը, որի հետևանքով Ղարաբաղյան շարժման երեք թեկնածուներ (Աշոտ Մանուչարյան, Լևոն Տեր-Պետրոսյան, Ռաֆայել Ղազարյան) դարձան Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներ: Խորհրդային կարգերի հաստատումից ի վեր սա առաջին դեպքն էր, որ ընդդիմության ներկայացուցիչները կարողացան մուտք գործել իշխանության մարմիններ:

Ազգային բոլոր ուժերը համախմբելու և համազգային հզոր կազմակերպություն ստեղծելու նպատակով Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի նախաձեռնությամբ հրավիրվեց «Ղարաբաղ» կոմիտեների և մի շարք այլ կազմակերպությունների ներկայացուցիչների համագումար, որտեղ հիմնադրվեց Հայոց Համազգային Ծարժումը (ՀՀԾ): ՀՀԾ հիմնադիր համագումարում (1989 թ. նոյեմբեր) ընդունվեց շարժման առաջին ծրագիրն ու կանոնադրությունը, ընտրվեցին նրա ղեկավար մարմինները՝

Հաջորդ՝ 1990 թվականը շրջադարձային էր Հայաստանի քաղաքական կյանքում: Մայիսի 20-ին կայացան Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններ, որոնք առաջին բազմակուսակցական ընտրություններն էին պետական անկախության կորստից հետո: Մրցապայքարը հիմնականում ընթանում էր ՀՀԾ-ի և ՀԿԿ-ի միջև: Վերջինս, Խորհրդային Միության աստիճանական փլուզմանը զուգընթաց, ավելի ու ավելի էր զրկվում կենտրոնական կուսակցական մարմինների ինչպես օժանդակությունից, այնպես էլ թելադրանքից, որն, իհարկե, նպաստում էր նրա ձևավորմանը որպես ինքնուրույն քաղաքական կուսակցություն: Պատգամավորական տեղերի համար պայքարում էին նաև մեծ թվով թեկնածուներ այլ կուսակցություններից, ինչպես նաև գիտության և մշակույթի ճանաչված գործիչներ, մտավորականներ, որոնք արցախյան շարժման սկզբից ևեթ զբաղվում էին ակտիվ հասարակական - քաղաքական գործունեությամբ: Նրանցից շատերը թեև անվանապես ՀԿԿ անդամ էին, բայց համակրում և պաշտպանում էին ՀՀԾ-ին: Այս հանգամանքի շնորհիվ նորընտիր Գերագույն խորհրդում կոմունիստները չկարողացան մեծամասնություն ապահովել: 1990 թ. օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀԾ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Այնուհետև կազմավորվեց նոր, ոչ կոմունիստական կառավարություն: Այս իրադարձությունները նշանավորում էին կոմունիստական-միակուսակցական

<sup>1</sup> Տե՛ս ՀՀԾ 12-րդ համագումարի (դեկտեմբեր, 2000 թ.) պատվիրակների համար տպագրված ժողովածուն, որտեղ (էջ 3-18) տրված է կուսակցության համագումարների քրոնիկոնը:

համակարգի վերացումը Հայաստանում: Սակայն բազմակուսակցական համակարգի իրավական հիմքը դրվեց 1991 թ. փետրվարին, երբ հանրապետության խորհրդարանն ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որը հնարավորություն տվեց երկար ընդմիջումից հետո հայրենիքում ազատ գործունեություն ծավալել ազգային-ավանդական կուսակցություններին՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությանը, Ռամկավար Ազատական և Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցություններին: Հայաստանի ռամկավարներն իրենց կուսակցությունն անվանեցին Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցություն (ՀՌԱԿ): Այս կուսակցությունների վերահաստատումը մեծապես նպաստեց քաղաքական կյանքի աշխուժացմանը Հայաստանում: Գերագույն խորհրդի չորս տասնյակից ավելի պատգամավերներ հայտարարեցին ՀՀԴ-ին և ՀՌԱԿ-ին անդամակցելու իրենց որոշման մասին, որի հետևանքով խորհրդարանում ձևավորվեցին երկու նոր կուսակցական-պատգամավորական ֆրակցիաներ: Հետխորհրդային Հայաստանի առաջին բազմակուսակցական խորհրդարանում ամենամեծ ֆրակցիան ուներ ՀՀԾ-ն, նրան հաջորդում էին ՀՀԴ-ի, ՀԿԿ-ի և ՀՌԱԿ-ի ֆրակցիաները, որոնց մեջ ընդգրկված պատգամավորների թիվը հաստատուն չէր և հաճախ փոփոխվում էր: Ազգային Ինքրորոշում Միավորման և մյուս կուսակցությունների խորհրդարանական ֆրակցիաները բավականին փոքր էին: Ներքին և արտաքին քաղաքականության սկզբունքային հարցերի շուրջ խորհրդարանական ֆրակցիաների միջև բավականին սուր պայքար էր գնում, որն առավել խորացավ ԽՍՀՄ-ի փլուզումից և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից (1991 թ. սեպտեմբերի 23) հետո, երբ կյանքի կոչվեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Դա կապված էր այն բանի հետ, որ Հայաստանի քաղաքական կուսակցությունները, խորհրդարանում միաձայն քվեարկելով անկախության հռչակման օգտին, բավականին տարբեր մոտեցումներ ունեին երկրի հետագա զարգացման ուղիների և արցախյան խնդրի լուծման միջոցների նկատմամբ: Համաձայնություն չկար ինչպես կառավարող ՀՀԾ-ի և ընդդիմության դիրքերում գտնվող մյուս կուսակցությունների, այնպես էլ վերջիններին միջև:

Քաղաքական պայքարն անընդհատ սրվում էր տնտեսական ծանր կացության, էներգետիկ ճգնաժամի, շրջափակումների և Արցախում ընթացող պատերազմի հետևանքով: Սակայն պետք է նշել, որ միասնության բացակայությունն ընդդիմադիր կուսակցությունների միջև մեծապես նպաստեց ՀՀԾ-ի դիրքերի ամրապնդմանը: Դրա վաղ վկայությունն էր 1991 թ. հոկտեմբերի 16-ին կայացած Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները: Ընդդիմության կողմից միասնական թեկնածու չառաջադրվեց: ՀԿԿ-ն, որ դեռ ուշքի չէր եկել խորհրդարանական ընտրություններում կրած պարտությունից, թեկնածու չառաջադրեց: ՀՌԱԿ-ը որոշեց պաշտպանել ՀՀԾ-ի կողմից առաջադրված ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը, որն էլ հավաքելով ընտրողների ձայների 70 տոկոսից ավելին՝ բացահայտ առավելությամբ հաղթանակ տարավ ԱԽՄ-ի կողմից առաջադրված Պարույր Հայրիկյանի, ՀՀԴ-ի կողմից առաջադրված Սոս Սարգսյանի և մյուս թեկնածուների նկատմամբ: ՀՀԾ-ի հաղթանակը հայոց պատմության մեջ տեղի ունեցած առաջին նախագահական ընտրություններում պայմանավորված չէր միայն ընդդիմության միասնության բացակայությամբ: Արցախյան ազգային-ազատագրական շարժման առաջնորդ և երրորդ Հանրապետության հիմնադիր Հայոց Համազգային Ծարժման քաղաքական վարկը շատ ավելի բարձր էր մյուս կուսակցությունների համեմատ: Որպես պետական - քաղաքական գործիչ Լևոն Տեր-Պետրոսյանն իր անհատական արժանիքներով նույն-

<sup>2</sup> Տե՛ս Յովիկ Էօրտեքեան, Համառոտ պատմություն ՀՌԱԿ-ի, Եր., 1996, էջ 21-22:

պես զգալիորեն գերազանցում էր մյուս թեկնածուներին: Հաղթանակը նախագահական ընտրություններում փաստեց ՀՀԾ-ի լիակատար քաղաքական տիրապետության հաստատումը:

Անկախ պետականության հաստատմանը հաջորդած տարիների ընթացքում, մինչև 1995 թ. նոր խորհրդարանական ընտրությունները քաղաքական կուսակցությունների կազմավորման գործընթացը հանրապետությունում շարունակվում էր: 1991 թ. Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորներ, որոնք հեռացել էին ՀՀԾ-ից, կազմեցին իրենց առանձին պատգամավորական ֆրակցիան, որի անդամները իրենց կոչեցին ազգային-ժողովրդավարներ: Այդ ֆրակցիայի հիման վրա էլ ձևավորվեց Ազգային Ժողովրդավարական Միություն կուսակցությունը (ԱԺՄ): 1991 թ. ՀԿԿ-ից հեռացած մի խումբ գործիչներ հիմք դրեցին Հայաստանի Դեմոկրատական կուսակցությանը (ՀԴԿ), որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ սեպտեմբերին: Երկու նոր կուսակցություն հիմնադրեցին ՀՌԱԿ-ի պատգամավորական ֆրակցիայից հեռացած մի խումբ գործիչներ: Դրանցից մեկը կոչվեց Ռամկավար-Ազատական (Լիբերալ-Դեմոկրատական) կուսակցություն, մյուսը՝ ժողովրդական կազմակերպություն, որն իրեն հռչակեց նախկին արևելահայ լիբերալների կուսակցության՝ Հայ Ժողովրդական կուսակցության գաղափարախոսության ժառանգորդը: «Առաքելություն» կոչվող կուսակցությունը հիմնադրեցին «Ղարաբաղ» կոմիտեի Գյումրիի կազմակերպությունների գործիչները: 1994 թ. ՀՀ Արդարադատության նախարարության կողմից գրանցվեց «Ազգային Պետություն» հասարակական-քաղաքական կազմակերպությունը: Նույն տարում գրանցվեց նաև Հայաստանի գիտաարդյունաբերական և քաղաքացիական Միությունը, որն իրեն հռչակեց արտակուսակցական հասարակական-քաղաքական կազմակերպություն: 1995 թ. խորհրդարանական ընտրություններից առաջ գրանցվեց նաև «Ծամիրամ» կանանց միավորումը, որը դարձավ հայ կանանց առաջին քաղաքական կազմակերպությունը: Նոր հիմնադրված կուսակցություններից էին նաև (մինչև 1995 թ. Արդարադատության նախարարության կողմից գրանցվել էին 35-ից ավելի հասարակական-քաղաքական կազմակերպություններ) Հայաստանի ագրարային ժողովրդավարական կուսակցությունը, Հայ դաշնակցություն կուսակցությունը, Հայաստանի Քրիստոնեա-դեմոկրատական Միությունը և այլն: Սակայն պետք է նշել, որ Հայաստանի նորաստեղծ կուսակցությունների մեծ մասը դեռևս չունի ամուր կազմակերպական կառույցների լայն ցանց և փոքրաթիվ է: Կան նաև գրանցված, բայց չգործող «կուսակցություններ», որոնք գոյություն ունեն միայն թղթի վրա: 1997 թ. գրանցված հասարակական-քաղաքական կազմակերպությունների թիվը հասավ 53-ի<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների ուժերի փոխհարաբերության պատկերն այսպիսի տեսք ընդունեց 1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո: Հայաստանի նոր պառլամենտի՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցում էին 13 կուսակցություններ և կուսակցությունների նախընտրական դաշինքներ<sup>4</sup>:

Ընտրություններն անցկացվեցին ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ընտրական համակարգով: Հուլիսի 11-ին ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստը հրա-

<sup>3</sup> Տե՛ս Գևորգ Գողոսյան, Սամսոն Մխիթարյան, Հայաստանի քաղաքական կուսակցություններ (տեղեկատվություն և վերլուծություն 1991-96 թթ.), Եր., 1997, էջ 5-9:

<sup>4</sup> Հակասահմանադրական գործունեության մեղադրանքով ՀՀ իշխանությունները կասեցրին Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության գործունեությունը, և նա չկարողացավ մասնակցել ընտրություններին:

պարակեց համամասնական ընտրական համակարգով ընտրությունների հետևյալ արդյունքները.

Կուսակցությունը	Կողմ ձայների քանակը	Կողմ ձայները տոկոսային հարաբերությամբ
1. Ազգային ժողովրդավարական միություն	57996	7.51
2. Ազգային ինքնորոշում միավորում	42987	5.57
3. Ազգային պետություն	8397	1.09
4. Առաքելություն	10426	1.35
5. Ժողովրդական կազմակերպություն	6706	0.87
6. «Կամք» միություն և հայ դաշնակցություն կուսակցություն	15424	2.00
7. Հայաստանի ագրարային ժողովրդավարական կուսակցություն	12143	1.57
8. Հայաստանի գիտա-արդյունաբերական և քաղաքացիական միություն	9940	1.29
9. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	13781	1.79
10. Հայաստանի կոմունիստական կուսակցություն	93353	12.10
11. Հայաստանի Ռեմկավար Ազատական կուսակցություն	19437	2.52
12. «Հանրապետություն» միավորում	329300	42.66
13. «Ծամիրամ»	130252	16.88

Այս տվյալների<sup>5</sup> հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշեց համամասնական ընտրական համակարգով 5 տոկոսի բնագիծը հաղթահարած հետևյալ կուսակցություններին համամասնաբար բաշխել Ազգային ժողովի 40 մանդատներ, որոնցից՝

1. «Հանրապետություն» միավորմանը՝ 20 մանդատ
2. «Ծամիրամ»-ին՝ 8 մանդատ
3. Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 6 մանդատ
4. Ազգային ժողովրդավարական միություն՝ 3 մանդատ
5. Ազգային ինքնորոշում միավորում՝ 3 մանդատ:

Մեծամասնական և համամասնական ընտրական համակարգերով տեղի ունեցած ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումից հետո Ազգային ժողովում կուսակցական ուժերի փոխհարաբերակցությունն ընդունեց հետևյալ տեսքը.

- «Հանրապետություն» միավորում՝ 114 պատգամավոր
- «Ծամիրամ»՝ 8 պատգամավոր
- Հայաստանի կոմունիստական կուսակցություն՝ 7 պատգամավոր
- Ազգային ժողովրդավարական միություն՝ 5 պատգամավոր
- Ազգային Իքնորոշում միավորում՝ 3 պատգամավոր<sup>6</sup>:

Մեծ մասամբ անկուսակցական պատգամավորների միավորման հետևանքով կազմվեց «Բարեփոխումներ» անունը կրող ֆրակցիան, որը խորհրդարանում ուներ 35 տեղ: Ինչպես ցույց են տալիս այս տվյալները, կառավարող՝ Հայոց Համազգային Ծարժման կողմից գլխավորվող «Հանրապետու-

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հուլիսի 1995 թ.:

<sup>6</sup> Կուսակցությունների մեծատառ-փոքրատառ գրության տարբերությունները արդյունք են պաշտոնական փաստաթղթերի ոչ միօրինակության:

թում» միավորումը՝ բացարձակ մեծամասնություն ունեւ բարձրագույն օրենսդիր իշխանության մարմնում (191 պատգամավորից 114-ը):

Արտաքին և ներքին քաղաքականության սկզբունքային հարցերում նրան էին պաշտպանում «Բարեփոխումներ» և «Ծամիրամ» պատգամավորական ֆրակցիաները, ինչպէս նաև մի քանի անկախ պատգամավորներ: Երեք ընդդիմադիր կուսակցությունները (ՀԿԿ, ԱԺՄ, ԱԻՄ) միասին վերցրած ունեին ընդամենը 15 տեղ՝ զրկված լինելով պատլամենտի գործունեության վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից<sup>6</sup>:

1995 թ. պառլամենտական ընտրությունները նշանավորեցին նաև Հայաստանի երրորդ Հանրապետության թեակոխումը քաղաքական անընդհատ խորացող ճգնաժամի ժամանակաշրջանը, որը ձգվեց մինչև 1998 թվականը: Ընդդիմադիր կուսակցությունները՝ ԱԻՄ-ը, ԱԺՄ-ն, ՀԿԿ-ն և հատկապէս արգելված Դաշնակցությունը մեղադրում էին ՀՀԾ-ին ընտրությունների արդյունքները կեղծելու մեջ: Ծգնաժամը իր բարձրակետին հասավ 1996 թ. նախագահական ընտրություններից հետո, երբ ընդդիմադիր կուսակցությունների դաշինքի՝ Ազգային Միասնություն Համաձայնության թեկնածու Վազգեն Մանուկյանը, ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական տվյալների, պարտվեց Լևոն Տեր-Պետրոսյանից: Այս արդյունքները ևս չընդունվեցին ընդդիմադիր կուսակցությունների կողմից, որը հանգեցրեց լուրջ բախումների և առճակատման: Իշխանությունները դիմեցին զինված ուժերի միջոցով «ազատ, բայց անարդար» ընտրությունների դեմ բողոքող ընդդիմությանը ճնշելու մեթոդին: Քաղաքական ճգնաժամը այնուհետև ընդգրկեց նաև իշխանական ոլորտները, որտեղ 1996-1997 թթ. սուր բախումներ էին տեղի ունենում Ղարաբաղյան խնդրի կարգավորման ուղիների շուրջը: Միջազգային հանրության աճող ճնշումը ստիպեց Լևոն Տեր-Պետրոսյանին քննարկման ներկայացնել որոշակի զիջումների տարբերակը և դա դարձնել հրապարակային բանավեճի առարկա: Այդ ընթացքում տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր հանրապետության քաղաքական դաշտում: Զրկվելով ուժային նախարարների աջակցությունից, որոնց հետ համամիտ էր նաև վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը ստիպված էր 1998 թ. փետրվարին հրաժարական տալ: Այս հրաժարականը փոխեց կուսակցական ուժերի փոխհարաբերությունը Ազգային ժողովում: Կառավարող «Հանրապետություն» միավորումը կորցրեց իր մեծամասնությունը, նրանից դուրս եկած մեծ թվով պատգամավորներ միացան «Երկրապահ» պատգամավորական խմբակցությանը, որն էլ դարձավ գերիշխողը պառլամենտում:

Այսպիսով, 1995 թ. սկսված քաղաքական ճգնաժամը հանգեցրեց կառավարող ՀՀԾ կուսակցության պառակտմանը և քաղաքական դաշտի վերաձևմանը: ՀՀԾ-ն մղվեց հետին պլան և զրկվեց իշխանական բոլոր լծակներից: Թվում էր, թե այս հանգամանքը կնպաստի ընդդիմադիր կուսակցությունների վարկանիշի բարձրացմանը, բայց տեղի ունեցավ հակառակը: Կառավարող «Երկրապահ»-ը, որի ղեկավարները և համախոհները (հատկապէս վարչապետ Ռոբերտ Քոչարյանը և պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը) նախկինում եղել էին ՀՀԾ-ի քաղաքական ճամբարում և եռանդուն պաշտպանել էին Լևոն Տեր-Պետրոսյանին և նույնքան եռանդով ճնշել ընդդիմության բողոքը 1995 և 1996 թթ. ընտրությունների կեղծման դեմ, այժմ այդքան էլ մեծ ցանկություն չունեին իշխանական վագոնում նստատեղեր զիջել իրենց նախկին հակառակորդներին: Բացի այդ, սրընթաց կերպով քաղաքական

<sup>6</sup> ՀՀԾ-ից բացի, նրա մեջ մտնում էին Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, Հայաստանի Քրիստոնեա-Դեմոկրատական միությունը, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը, «Մտավորական Հայաստան» միությունը և Ռամկավար-Ազատական (Լիբերալ-Դեմոկրատական) կուսակցությունը:

<sup>7</sup> Տե՛ս Գևորգ Գողոպյան, Սամսոն Մխիթարյան, նշված աշխատությունը, էջ 60:



դաշտ մտավ Խորհրդային Հայաստանի նախկին ղեկավար Կարեն Դեմիրճյանը, որն ուներ ամենաբարձր վարկանիշը բոլոր քաղաքական գործիչների նկատմամբ: Նրա շուրջը սկսեց ձևավորվել մի հզոր շարժում, որի կարծրացումը և կազմակերպական ամրապնդումը ժամ առ ժամ տանում էր դեպի նոր կուսակցության ձևավորումը: Դեմիրճյանը ձեռք բերեց հսկայական ընտրազանգված, որտեղ հայտնվեցին դեմիրճյանական ծաղկուն Հայաստանը վերականգնված, որտեղ հայտնվեցին դեմիրճյանական ծաղկուն Հայաստանը վերականգնված տեսնելու ցանկությամբ ոգևորված մեծ թվով մարդիկ, որոնց մեջ էին նաև նախկին վարչակարգից դժգոհները և ընդդիմությունից հիասթափվածները: Ստեղծված իրադրության փայլուն պատկերը հանդիսացավ 1998 թ. մարտի 16-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունը: Հանրապետության քաղաքական կուսակցությունների կողմից առաջադրվեց 12 թեկնածու, որոնցից 7-ը՝ (Դավիթ Շահնազարյան, Արտաշես Գեղամյան, Հրանտ Խաչատրյան, Վիգեն Խաչատրյան, Արամ Սարգսյան, Յուրի Մկրտչյան, Աշոտ Բլեյան) չկարողացան հաղթահարել անգամ մեկ տոկոսի բնագիծը: Մնացած հինգ թեկնածուները առաջին փուլում շահեցին ձայների հետևյալ քանակը՝

ԱԻՄ - Պարույր Հայրիկյան՝ 5,41 %  
ՀԿԿ - Սերգեյ Բադալյան՝ 11,02 %  
ԱԺՄ - Վազգեն Մանուկյան՝ 12,22 %  
Կարեն Դեմիրճյան՝ 30,62 %  
Ռոբերտ Քոչարյան՝ 38,20 %:

Երկու առաջատար թեկնածուներն ընտրություններին մասնակցում էին որպես անկուսակցականներ, որովհետև Ռոբերտ Քոչարյանին օժանդակող «Երկրապահ»-ը դեռ չէր դարձել կուսակցություն, իսկ Դաշնակցությունը դեռ արգելված էր: Միևնույն ժամանակ ավարտված չէր նաև Դեմիրճյանի կուսակցության ձևավորման գործընթացը: Ինչևիցե, կառավարող ուժերը չկարողացան հաղթել Դեմիրճյանին առաջին փուլում և ստիպված էին գնալ երկրորդ փուլին: Երկրորդ փուլի արդյունքները հետևյալ տեսքն ունեին՝

Ռոբերտ Քոչարյան՝ 59,49 %  
Կարեն Դեմիրճյան՝ 40,51%:

Այսպիսով բավականին բարձր վարկանիշ ունեցող Կ. Դեմիրճյանը պարտվեց՝ զիջելով Ռ. Քոչարյանին ձայների մոտ 19% տարբերությամբ:

Պատճառներն այստեղ մի քանիսն էին.

1) գործադիր իշխանությունը բոլոր մակարդակներով բավականին արդյունավետ աշխատեց հօգուտ Ռ. Քոչարյանի,

2) որոշ կուսակցությունների պարտված թեկնածուներ (ԱԻՄ - Պարույր Հայրիկյան, Դեմոկրատական կուսակցություն- Արամ Սարգսյան) հանդես եկան Ռ. Քոչարյանի թեկնածությունը պաշտպանելու հայտարարություններով.

3) առաջին փուլում 23 %-ից ավելի ձայներ տարած ԱԺՄ-ի և ՀԿԿ-ի թեկնածուները մնացին չեզոք: Ենթադրում ենք, որ այս կուսակցությունների ընտրազանգվածի մի մասը թեքվել է Ռ. Քոչարյան կողմը,

4) Կ. Դեմիրճյանը չունեւր կազմակերպչորեն ձևավորված ամուր կուսակցություն - հենարան և չէր օգտվում գործադիր կառույցների օժանդակությունից, որոնց վրա մեծ ազդեցություն ուներ նախարար Վազգեն Սարգսյանը:

Հաշվի առնելով նախագահական ընտրությունների դասերը և նախապատրաստվելով 1999 թ. պառլամենտական ընտրություններին՝ Երապետության երեք առաջատար գործիչները հաջորդ մեկ տարին նվիրված իրենց հենարան-կուսակցություն ստեղծելու գործին: Նախագահ Ռոբերտ Քոչարյանը ընտրվելուց կարճ ժամանակ անց լեզուսացրեց Հայ Հեղափոխական և Դաշնակցություն կուսակցությունը, որի ամուր կազմակերպական կառույցներն ու

\* 1998 թ. նախագահական ընտրություններին վերաբերվող բոլոր տվյալները վերցված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական հաղորդագրություններից:

ազգային ավանդական գաղափարները և նախկինների կողմից արգելված ու հալածված լինելու հանգամանքը բարձր վարկանիշ էր խոստանում: Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը իր «Երկրապահ»-ը միավորեց Հայաստանի Հանրապետական կուսակցությանը (ստեղծվել էր 1990 թ. «Անկախության բանակ» ռազմաքաղաքական միավորման հիմքի վրա), որի հետևանքով այն մեխանիկորեն դարձավ պառլամենտական մեծամասնություն ունեցող կուսակցություն: Կարեն Դեմիրճյանը 1999 թ. գումարեց իր կուսակցության հիմնադիր համագումարը, որը կոչվեց Հայաստանի Ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ):

Ուժերի այսպիսի բևեռացման պայմաններում 1999 թ. մայիսին տեղի ունեցան Հայաստանի երրորդ Հանրապետության երկրորդ խորհրդարանական ընտրությունները, որոնք նշանավորեցին նոր փուլ բազմակուսակցության հաստատման ճանապարհին: 21 կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ և հասարակական - քաղաքական կազմակերպություններ համամասնական ընտրակարգով մասնակցեցին ընտրություններին: Առաջատարը «Միասնություն» դաշինքն էր, որի մեջ մտան ՀՀԿ-ն և ՀԺԿ-ն: Դաշինքի ստեղծման պատճառները մի քանիսն էին, բայց հիմնականը Կարեն Դեմիրճյանի ձգտում էր՝ օգտվել գործադիր իշխանությունների աջակցությունից, և Վազգեն Սարգսյանի ճիշտ քաղաքական դիրքորոշումը, որը թելադրում էր վերջնականի հաղթանակի համար անպայման հենվել նաև դեմիրճյանական հոծ ընտրազանգվածի վրա: Հաշվարկներն արդարացրին իրենց: «Միասնություն» դաշինքը հաղթեց, իսկ ընտրությունների արդյունքները հետևյալ տեսքն ընդունեցին.

1999 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած ՀՀ ԱԺ համամասնական ընտրակարգով ընտրություններում հինգ տոկոսի բնագիծը հաղթահարած կուսակցությունները և դաշինքները՝

ԱԺՄ՝ 5,17 %

«Իրավունք և միաբանություն» դաշինք՝ 7,96%

ՀԿԿ՝ 12,09 %

ՀՀԴ՝ 7,84 %

«Միասնություն» դաշինք՝ 41,69 %

«Օրինաց Երկիր»՝ 5,28 %:

Անցած քաղաքական գործընթացները վկայում են, որ բազմակուսակցությունը Հայաստանի Հանրապետությունում հաստատված իրողություն է: Անկախության տաս տարիների ընթացքում մենք ունեցել ենք պառլամենտական երկու (1995 և 1999 թթ.) և պրեզիդենտական երեք (1991, 1996 և 1998 թթ.) ընտրություններ, որոնք բոլորն էլ անցան բազմակուսակցության պայմաններում, չնայած առկա էին ընտրախախտումների փաստերը, որոնք անցումային փուլում անխուսափելի են, քանի դեռ պառլամենտարիզմը և դեմոկրատիան չեն արմատավորվել խորությամբ:

Սակայն 1999 թ. հոկտեմբերի 27-ի իրադարձություններից հետո էապես փոխվեց հանրապետության քաղաքական դաշտը: «Միասնություն» դաշինքը կորցրեց իր քաղաքական վարկը, իսկ նրա բաղկացուցիչ մաս կազմող երիտասարդ կուսացությունները, որոնք նույնիսկ չէին հասցրել ստեղծել իրենց կառուցվածքներն ու կուսակցական հիերարխիան, սկսեցին պառակտվել: Առաջացավ անորոշ քաղաքական իրավիճակ, որը, մեր կարծիքով, ուղղակիորեն կարող ենք բնութագրել որպես խորհրդարանում մեծամասնություն կազմող քաղաքական կուսակցությունների լեգիտիմության կորուստ: Կարեն Դեմիրճյանի և Վազգեն Սարգսյանի անձնական հեղինակությունն ու քաղաքական իմիջն էր, որը ապահովեց Հայաստանի Ժողովրդական կուսակցության և

՝ Տե՛ս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական տվյալները, նաև՝ «Հայաստանի Հանրապետություն», 5 հունիսի 1999 թ.:

Հայաստանի հանրապետական կուսակցության ընտրադաշինքի հաղթանակը: 1999 թ. հանրապետության քաղաքացիները քվեարկել էին հօգուտ այս երկու անձերի, այլ ոչ թե այդ երկու կուսակցությունների: «Միասնության» առաջնորդների մահը հարցականի տակ դրեց ընտրությունների արդյունքում ստեղծված կուսակցական ուժերի փոխհարաբերությունը Ազգային ժողովում: Ստեղծված իրավիճակը ցույց տվեց մահ կուսակցությունների մասին օրենքի անկատարությունը, որը լիարժեք կերպով չի կանոնակարգում կուսակցությունների մասնակցությունը օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ընտրություններին: Օրենքի անկատարությունը հնարավորություն է տալիս ընտրապայքարի մեջ մտնել բազմաթիվ արհեստածին կուսակցությունների ու դաշինքների, որոնք բարդացնում են իրավիճակը, ստեղծում անկայունություն և արժեզրկում կուսակցականության գործոնը:

Ամփոփելով բազմակուսակցության հաստատման գործընթացի վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ

- բազմակուսակցության հաստատումը Հայաստանում օգնեց խուսափել անիշխանությունից մի կողմից, տոտալիտարիզմից՝ մյուս կողմից, որոնք իրողություն դարձան հետխորհրդային տարածաշրջանի մի շարք պետություններում,

- քաղաքական կոլտուրայի և պառլամենտարիզմի ավանդույթների բացակայությունը հնարավոր դարձրեց կյանային շահեր ունեցող քաղաքական խմբավորումների ներթափանցումը օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմիններ, որը կատարվեց բազմակուսակցության քողի տակ,

- բազմակուսակցության շնորհիվ ազատականությունն ու այլախոհությունը ընդգրկեցին հասարակական - քաղաքական կյանքի բոլոր ոլորտները, սակայն քաղաքական լիակատար կայունության այդպես էլ չհաջողվեց հասնել,

- Հայաստանի նման փոքրիկ հանրապետությունում մեծ թվով կուսակցությունների և ընտրական դաշինքների մասնակցությունը ընտրություններին ոչ թե կողմնորոշեց, այլ ապակողմնորոշեց ընտրազանգվածի որոշ հատվածներին և նպաստեց հասարակության լայն շերտերի ապաքաղաքականացմանը,

- կառավարությունների շարունակական փոփոխությունները, որոնք ուղեկցվում են սոցիալ - տնտեսական ճգնաժամի խորացմամբ, հանգեցրին կառավարական կոալիցիաներում ընդգրկված կուսակցությունների հեղինակազրկմանը, իսկ երկրի զարգացման և հետագա ճակատագրի պատասխանատվությունը կախված մնաց օդում:

**Г. М. КЕРЯН — Становление многопартийности в Республике Армения в 1990-2000 гг. (историко-политологический очерк).** - Республика Армения имеет многопартийную систему, процесс становления которой начался с выборов Верховного Совета Советской Армении в мае 1990 г., когда армянское общенациональное движение (АОД) получило большинство депутатских мандатов. Несколько позже в Верховном Совете Армении было образовано несколько партийных фракций. Юридически многопартийность в стране утвердилась после принятия закона об общественно-политических организациях (февраль 1991 г.). В 1995 г. в министерстве юстиции было зарегистрировано более тридцати общественно-политических организаций и политических партий. В последующие пять лет их число удвоилось. Развитию многопартийности способствовал и новый избирательный закон, согласно которому выборы проводились и по партийным спискам. В июле 1995 г. на выборах Национального Собрания участвовали 13 партий и партийных блоков. Парламентские выборы 1999 г. ознаменовались участием более двадцати партий и предвыборных объединений. Многопартийными были и президентские выборы 1991, 1996, 1998 гг. Вместе с тем надо отметить, что развитию полноценной многопартийности препятствуют довольно низкая политическая культура масс, недостатки избирательного закона и сложная социально-экономическая обстановка.